**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, +37494900906
norgeghi.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2021 թվականի N 109

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N 18 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2021 թվականի նոյեմբերի 4-ի N 18 արտահերթ նիստի օրակարգը.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին
2. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի ավագանու 2021 թվականի 2021թվականի օգոստոսի 26-ի N84 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - Դեմ - Ձեռնպահ -

Սամվել Ալեքսանյան _____

Արմեն Բաբախանյան _____

Վահագ Գևորգյան _____

Գագիկ Գևորգյան _____

Վլադիկ Գրիգորյան _____

Մանյա Կիրակոսյան _____

Շիրալի Մամոյան _____

Մարիա Մկրտչյան _____

Նաթելա Շմավոնյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

# ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2021 թվականի N 110

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-ն որոշման առաջին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականության հանդիսացող 07-048-0429-0002hg կադաստրային ծածկագրով 0.28800 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը ուղղակի վաճառքով օտարել Լևոն Երեմյանին, որպեսզի վերջինս ընդլայնի իրեն սեփականության իրավունքով պատկանող 07-048-0429-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասը: Հողամասը օտարել կադաստրային արժեքով, որը կազմում է 19584 /տասնիննը հազար հինգ հարյուր ութսունչորս/ դրամ:

2. Սահմանել, որ նշված հողամասի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում են Լևոն Երեմյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լևոն Երեմյանին պաշտոնական ծանուցման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ - Դեմ - Ձեռնպահ –

Սամվել Ալեքսանյան _____

Արմեն Բաբախանյան _____

Վահագ Գևորգյան _____

Գագիկ Գևորգյան _____

Վլադիկ Գրիգորյան _____

Մանյա Կիրակոսյան _____

Շիրազի Մամոյան _____

Մարիա Մկրտչյան _____

Նաթելա Շմավոնյան _____

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

# ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2021 թվականի N 111

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 8-րդ ենթակետի 3-րդ պարբերության, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 29-րդ ենթակետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի $14^3$-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, ինչպես նաև հիմք ընդունելով Նոր Գեղի համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 11-ի N75 որոշումը, Սարգիս Սաֆարյանի դիմումը՝ համայնքի ավագանին **որոշում** է.

1. Սարգիս Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր 07-048-0093-0046/ 0,04 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0,04հա մակերեսի նպատակային նշանակությունը փոխել դարձնել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակությամբ:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Սարգիս Սաֆարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ - Դեմ - Ձեռնպահ –

Սամվել Ալեքսանյան _____

Արմեն Բաբախանյան _____

Վահագ Գևորգյան _____

Գագիկ Գևորգյան _____

Վլադիկ Գրիգորյան _____

Մանյա Կիրակոսյան _____

Շիրալի Մամոյան _____

Մարիա Մկրտչյան _____

Նաթելա Շմավոնյան _____

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

# ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2021 թվականի N 119

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով <<Հողային օրենսգրքի>> 48-րդ հոդվածի պահանջները և ՀՀ կառավարության 12 ապրիլի 2001 թվականի N 286 որոշման՝ VIII գլխի 46.2 կետի պահանջները, ավագանին **որոշում է՝**

1. Կառուցապատման իրավունքի տրամադրման համար մրցույթի է ներկայացվում Նոր Գեղի համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-048-0451-0022-ից 0,17825 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների առողջարանային կառուցապատման հողատարածք, 25(քսանհինգ) տարի ժամկետով, տարեկան 79200 (յոթանասունիննը հազար երկու հարյուր) դրամ վարձավճարով:

2. Կառուցապատման իրավունքի տրամադրման համար մրցույթի է ներկայացվում Նոր Գեղի համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-048-0451-0023 0,03 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների առողջարանային կառուցապատման հողատարածք, 25(քսանհինգ) տարի ժամկետով, տարեկան 13500 (տասներեք հազար հինգ հարյուր) դրամ վարձավճարով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ - Դեմ - Ձեռնպահ –

Սամվել Ալեքսանյան _____

Արմեն Բաբախանյան _____

Վահագ Գևորգյան _____

Գագիկ Գևորգյան _____

Վլադիկ Գրիգորյան _____

Մանյա Կիրակոսյան _____

Շիրալի Մամոյան _____

Մարիա Սկրտչյան _____

Նաթելա Շմավոնյան _____

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ**